

զրոքի. աշխատութեան դալու մարդուն համար՝ 800 զրոքի, ծերու գին՝ 300 զրոքի, իսկ պառաւի համար՝ 200 զրոքի։ Այլազգւոյ մը միջնորդելով՝ կամաց կամաց գերեզմարք պահանջնին իջեցուցին. այլ միանձանց փողը հազիւ կը բաւէր 'ի փրկանս ութ գերեաց։ Այլ երբ տեսան այլազգիք որ միանձունք յետ դառնալու կը պատրաստուին, աւելի իջեցուցին գերեաց գինը. սակայն ցաւալին այն էր՝ որ միանձանց դրամը բոլոր գերեաց ազատութեան չէր բաւել։ Վերջապէս կրօնաւորք փրկանաւորելով գերեաց մի մասը, խնդրեցին գերեզմարներէն՝ որ մնացելոց հետ քաղցրութեամբ վարուին, և խոստացան վերստին դառնալ 'ի Կամենից մեծ գումարով. և ազատած գերիներովն՝ մեկնեցան 'ի Կամենիցէ վրդովեալ սրտով, զի կատարեալ չէր ուրախութիւննին, թէպէտ ազատեալ գերեաց վրայ հայելով՝ մեծապէս կը մխիթարուէին, այլ մնացելոց նեղ վիճակն կը ճնշէր նոցա սիրտը. տասնի չափ այլազգի հեծեալ զօրականք՝ զմիանձունս, ազատեալ գերեաց հետ՝ դուրս հանեցին քաղաքէն։ Սոցա ընկերութենէն մին պակաս էր. Ակորսոյ չղարձաւ յիշով, նա ընտրեց գերեհանաց փառքէն աւելի՝ մնալ 'ի Կամենից, և ձեռնտու օգնական լինել համազգի եղբարց, վասն զի վստահ էր նա իւր բնական ձրից վրայ, և հաստատութեամբ միտքը դրած էր՝ տիրողաց սիրտը շահելով՝ տառապելոց նպաստամատոյց լինել. յորում և յաջողեցաւ։

Ակորսոյի առաջին ջանքն եղաւ Փաշային աչքը մտնալ, խոնարհութեամբ և ճարտարութեամբ կատարելով նորա հրամանները. Փաշայն և նորա մեծաւորք սկսան մասնաւոր ուշադրութիւն դարձնել այդ ճարտարախօս և աշխոյժ պատանւոյն վրայ.